ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 07/8555հ «24» 02 2012թ.

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 20.02.2012թ. հ.158-ի 1 գրության կապակցությամբ՝ հայտնում եմ հետևյալը.

1-ից 3-րդ հարցերի վերաբերյալ.

Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի հ.22/1 հասցեի զբոսայգու տարածքը հանդիսացել է պետական սեփականություն, որը ՀՀ կառավարության 15.05.2003թ. հ.698-Ն և Երևանի քաղաքապետի 16.07.2003թ. հ.1433-Ա որոշումներով կառուցապատման իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրվել է <<Կենտրոն-Կանաչապատում>> ՓԲԸ-ին: ՀՀ կառավարության 29.05.2009թ. հ.604-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի և 24.12.2009թ. հ.1517-Ն որոշման համապատասխան՝ զբոսայգին սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան համայնքին: Մինչև հողհատկացումը քննարկվող տարածքը հանդիսացել է պետական սեփականություն հանդիսացող զբոսայգի, իսկ ներկայումս՝ համայնքային սեփականություն հանդիսացող զբոսայգի:

Երևանի քաղաքապետարանում առկա տեղեկատվության համաձայն՝ Մաշտոցի պողոտայի հ.22/1 հասցեի զբոսայգում հողհատկացումները կատարվել են առևտրի տաղավարներ տեղադրելու և սրճարան կառուցելու նպատակներով՝ հետևյալ սուբյեկտներին՝

1) Նորիկ Հակոբյան ՝

-Երևանի քաղաքապետի 03.04.2002թ. հ540, 01.10.2002թ. հ.1692-Ա և 05.06.2003թ. հ.1208-Ա որոշումներով 200քմ մակերեսով, 15 տարի ժամկետով,

2) <<Դավիթ-Վանուշ>> ՍՊԸ՝
- Երևանի քաղաքապետի 03.04.2001թ. հ.293, 18.01.2002թ. հ.58-Ա և 08.06.2011թ. հ.2362-Ա որոշմամբ 36քմ մակերեսով /զուգարան-տաղավարներ տեղադրելու նպատակով/, 5 տարի ժամկետով, որը երկարացված է մինչև 31.12.2015թ.,
- Երևանի քաղաքապետի 25.02.2002թ. հ.280 և 16.09.2002թ. հ.1595-Ա որոշումներով 350քմ մակերեսներով, 25 տարի ժամկետներով,

3) <<Աղասի Տեր-Եսայան>> ԱՁ ՝
- Երևանի քաղաքապետի 18.12.2002թ. հ.2565-Ա որոշմամբ 20քմ մակերեսով, 5 տարի ժամկետով:

4) Զինա Վարդանյան՝
- Երևանի քաղաքապետի 08.02.2005թ. հ.177-Ա որոշմամբ 115քմ մակերեսով, 22 տարի ժամկետով,

5)Սուսաննա Ալեքսանյան՝
- Երևանի քաղաքապետի 22.12.2003թ. հ.2490-Ա որոշմամբ 20քմ մակերեսով, 5 տարի ժամկետով,

6) <<Դուբրավա>> ՍՊԸ՝
- Երևանի քաղաքապետի 12.02.2003թ. հ.216-Ա որոշմամբ 20քմ մակերեսով, 15 տարի ժամկետով,
- Երևանի քաղաքապետի 06.06.2003թ. հ.1263-Ա որոշմամբ 150քմ մակերեսով, 15 տարի ժամկետով:

7) <<Արտակ Հարությունյան>> ԱՁ՝
- Երևանի քաղաքապետի 01.07.2011թ. հ.2914-Ա որոշմամբ 12.56քմ մակերեսով, 5 տարի ժամկետով:

Առաջին երեք սուբյեկտների իրավունքների պետական գրանցման վերաբերյալ համապատասխան գրառում է կատարված <<Կետրոն Կանաչապատում>> ՓԲԸ-ի անվամբ 18.05.2006թ. տրված հ.1446031 սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականի <<Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ>> բաժնում:

4-րդ և 5-րդ հարցերի վերաբերյալ.

<<Դավիթ-Վանուշ>> ՍՊԸ-ի անվամբ 24.03.2006թ. տրված հ.1989412 սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ ընկերությանը 23.12.2005թ-ին տրվել է հ.18-07/2-3614 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, 25.01.2006թ-ին տրվել է հ.304 շինարարության թույլտվությունը:

<<Կենտրոն-Կանաչապատում>> ՓԲԸ-ին 13.12.2011թ-ին տրվել է հ.01/18-07/2-49502-966-1 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, 15.12.2011թ-ին համաձայնեցվել է 01/18-05/2-49502-1054-1 նախագիծը և տրվել է ոչ հիմնական շինությունների տեղադրման հ.01/18-49502-1064-1 թույլտվությունը:

Շինարարության թույլտվությունները տրամադրվել են վերոնշյալ իրավական ակտերի հիման վրա:

Մինչև 2005 թվականը Երևանի քաղաքապետարանի կողմից տրված և համաձայնեցված քաղաքաշինական փաստաթղթերը հանձնված են Հայաստանի ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղ:

6-րդ հարցի վերաբերյալ.

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների և դրանց համապատասխան ընդունված ՀՀ կառավարության 22.10.1998թ. թիվ 660 որոշմամբ հաստատված «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության» կարգի գործողությունը տարածվում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և դրանց բացակայության դեպքում՝ կառուցապատման նախագծերի, նոր կառուցվող քաղաքաշինական օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծերի վրա: «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ին ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվություն տրամադրելիս՝ քանի որ առկա են ՀՀ կառավարության 15.12.2005 թ. N 2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը և Երևանի քաղաքապետի 28.11.2007թ. N5074-Ա որոշմամբ հաստատված Երևան քաղաքի Կենտրոն թաղային համայնքի գոտիավորման նախագիծը (քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր), որով իրականացվող կառուցապատումը նախատեսված է եղել, հանրային քննարկման անհրաժեշտությունը բացակայել է:

7-րդ հարցի վերաբերյալ.

Վկայակոչված իրավական ակտով սահմանված պահանջները վերաբերում են հիմնական շինությունների կառուցման աշխատանքներին, մինչդեռ՝ տվյալ դեպքում իրականացվում է ընդամենը ոչ հիմնական շինությունների տեղադրում:

Կից ներկայացվում է սույն գրությունում հիշատակված Երևանի քաղաքապետարանում առկա փաստաթղթերի պատճենները՝ բաղկացած 28 թերթից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Զ.ԱՌԱՔԵԼՅԱՆ